



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Երևան, Բաղրամյան 19, հեռ. (011) 51 34 57, Էլ. փոստ sergey.bagratyan@parliament.am

N 17/15
28 նոյեմբերի 2017թ.

Հարգելի՛ Սեդա Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր 24.11.2017թ. հարցման հայտնում եմ, որ ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում իմ կողմից բազմիցս կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություններ ինչպես ՀՀ Ազգային ժողովում, այնպես էլ Վայոց ձորի մարզի տարբեր համայնքներում: Մասնավորապես՝ սույն թվականի հուլիսի 13-ի ֆեյսբուքյան իմ պաշտոնական էջում կատարել եմ գրառում առ այն, որ յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը կազմակերպում եմ քաղաքացիների ընդունելություն (գրառումը կարող եք գտնել իմ պաշտոնական էջում): Սակայն, եղել են բազմաթիվ դեպքեր, երբ անձանց ընդունել եմ իրենց իսկ նախընտրած օրը՝ հաշվի առնելով իրենց կողմից բարձրացվող հարցերի հրատապությունը և բազմաթիվ այլ գործոններ(Հ. Շահինյան 14.07.2017, Զ. Սլոյան 11.09.2017, Ռ. Ստեփանյան 23.09.2017, Ն. Ղահրամանյան 02.10.2017, Ս. Բուդոյան 02.10.2017, և այլն):

Գրավոր առաջարկներ (դիմում-խնդրանքներ) ստացել եմ հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներից: Ինչ վերաբերում է դրանց բովանդակությանը, ապա դրանք եղել են բազմաբնույթ՝ սկսած անձնականից մինչև իրավական (սոցիալական, աշխատանքի, ուսման, ոռոգման/խմելու ջրի հետ կապված խնդիրներ, միջհամայնքային փողոցների ասֆալտապատում, Ցախաց քար վանական համալրի, փողոցային լուսավորության բացակայության, դպրոցների/մանկապարտեզների վերանորոգման, պարտադիր սպանդային մորթի իրականացման իրավակարգավորումների, բանկերի կողմից պահանջով երաշխավորության ինստիտուտի, այգիների սեփականաշնորհման հետ կապված օրենսդրական արգելքների և բազմաթիվ այլ խնդիրների հետ կապված):

Ինձ դիմած քաղաքացիներից յուրաքանչյուրի խնդրին օրենքով ինձ վերապահված լիազորությունների շրջանակներում փորձել եմ ընթացք և լուծում տալ: Դիմում-բողոքների մի մասի հիման վրա պատգամավորական հարցում եմ ուղարկել պատկան մարմիններին (օրինակ՝ ՀՀ բարձրագույն որակավորման

հանձնաժողովին, «Հայաստան» համահայկական հիմնադրամին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը, ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեին և այլն):

Մնացած հարցերին անդրադարձել եմ պատգամավորական գործունեությանս շրջանակներում ելույթների, հարցադրումների տեսքով՝ հետամուտ լինելով դրանց լուծմանը: Մասնավորապես, 2016թ. բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ բարձրացրեցի «Ցախաց քար» վանական համալիրի հարցը, ինչի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետ Արմեն Աբրոյանի հետ այցելեցինք վանական համալիր՝ վերականգնողական աշխատանքների սկսման հնարավոր տարբերակները քննարկելու համար: Լիահույս եմ, որ մոտ ապագայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործուն աջակցությամբ վանական համալիրը կվերսկսի իր բնականոն գործունեությունը:

Եվս մեկ անգամ ցանկանում եմ հաստատել յուրաքայուր քաղաքացու բողոքը, առաջարկությունը լսելու և օրենքով ինձ վերապահված լիազորությունների շրջանակներում դրանց ընթացք տալ իմ պատրաստակամությունը: Ամենայն պատասխանատվությամբ վստահեցնում, որ ինձ ուղղված որևէ նամակ/ դիմում/ առաջարկություն անարձագանք չի մնացել և օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ստացել է պատասխան:

Կից ուղարկում եմ Վայոց Ձորի մարզի Եղեգիս, Արտաբույնք և Գողթանիկ հայանքներում քաղաքացիների հետ ունեցած հանդիպումներից, ինչպես նաև «Ցախաց քար» վանական համալիր կատարած այցից մի քանի լուսանկարներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ